1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնք, Վերին Գետաշեն բնակավայր, Ա թաղամասի 9-րդ փողոց, թիվ 7 հասցեում գործող «Արսեն Ստեփանյան» ԱԶ-ին պատկանող առևտրի կետում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայության օբյեկտներում և առևտրի իրականացման վայրերում օրենսդրությամբ սահմանված պահանջներին բավարարող ցուցանակով չապահովելու համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 158-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով Արմեն Վազգենի Ստեփանյանի նկատմամբ նշանակել վարչական տուգանք 20000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հուլիսի 2026 թվականի N 911-Ա

ԱՐԵՎՇԱՏ ԱՐԱՄԻ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 158-րդ հոդվածի 30-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով վարչական իրավախախտման վերաբերյալ 17.07.2026 թվականի թիվ 08/26 արձանագրությունը, Մարտունու համայնքապետարանի վարչական իրավախախտումների հարցերով հանձնաժողովի 21.07.2026 թվականի թիվ 16 արձանագրությունը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված, Մարտունու համայնքապետարանում իրականացված վարչական վարույթի ընթացքում բացահայտված գործի բոլոր հանգամանքները, հաստատված համարելով Արևշատ Արամի Ներսիսյանի կողմից Մարտունու համայնք, Վարդաձոր բնակավայր, Ալաշկերտի փողոց, թիվ 13 հասցեում գործող «Արևշատ Ներսիսյան» ԱԶ-ին պատկանող առևտրի կետում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայության օբյեկտներում և առևտրի իրականացման վայրերում օրենսդրությամբ սահմանված պահանջներին բավարարող կշռափաթեթավորված և վաճառքի դրված սննդամթերքի փաթեթի կամ մեջդիր պիտակների վրա օրենքով սահմանված նշումների բացակայության փաստը՝ **որոշում եմ**.

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնք, Վարդաձոր բնակավայր, Ալաշկերտի փողոց, թիվ 13 հասցեում գործող «Արևշատ Ներսիսյան» ԱԶ-ին պատկանող առևտրի կետում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայության օբյեկտներում և առևտրի իրականացման վայրերում օրենսդրությամբ սահմանված պահանջներին բավարարող կշռափաթեթավորված և վաճառքի դրված սննդամթերքի փաթեթի կամ մեջդիր պիտակների վրա օրենքով սահմանված նշումների բացակայության համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 158-րդ հոդվածի 30-րդ մասի

հիմքով Արևշատ Արամի Ներսիսյանի նկատմամբ նշանակել վարչական տուգանք 10000 (տասը հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

2. Արևշատ Արամի Ներսիսյանին 10000 (տասը հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տուգանքը 15-օրյա ժամկետում վճարել Մարտունու համայնքապետարանի 900145103066 հաշվի համարին:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետի վրա:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արևշատ Արամի Ներսիսյանին որոշման ընդունման մասին իրազեկմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Հ. ՀՈՎԵՅԱՆ

2026թ. հուլիսի 21
ք. Մարտունի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հուլիսի 2026 թվականի N 912-Ա

ԳՐԻՀԱ ՆՈՐԻԿԻ ԻՍՊԻՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 158-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով վարչական իրավախախտման վերաբերյալ 14.07.2026 թվականի թիվ 05 արձանագրությունը, Մարտունու համայնքապետարանի վարչական իրավախախտումների հարցերով հանձնաժողովի 21.07.2026 թվականի թիվ 17 արձանագրությունը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված, Մարտունու համայնքապետարանում իրականացված վարչական վարույթի ընթացքում բացահայտված գործի բոլոր հանգամանքները, հաստատված համարելով Գրիշա Նորիկի Իսպիրյանի կողմից Մարտունու համայնք, Գեղիովիտ բնակավայր, 5-րդ փողոց, թիվ 24 հասցեում գործող «Գրիշա Իսպիրյան» ԱԶ-ին պատկանող առևտրի կետում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայության օբյեկտներում և առևտրի իրականացման վայրերում օրենսդրությամբ սահմանված պահանջներին բավարարող ցուցանակով չապահովվելու փաստը՝ **որոշում եմ**.

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնք, Գեղիովիտ բնակավայր, 5-րդ փողոց, թիվ 24 հասցեում գործող «Գրիշա Իսպիրյան» ԱԶ-ին պատկանող առևտրի կետում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայության օբյեկտներում և առևտրի իրականացման վայրերում օրենսդրությամբ սահմանված պահանջներին բավարարող ցուցանակով չապահովվելու համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 158-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով Գրիշա Նորիկի Իսպիրյանի նկատմամբ նշանակել վարչական տուգանք 20000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

2. Գրիշա Նորիկի Իսպիրյանին 20000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տուգանքը 15-օրյա ժամկետում վճարել Մարտունու համայնքապետարանի 900145111051 հաշվի համարին:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետի վրա:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գրիշա Նորիկի Իսպիրյանին որոշման ընդունման մասին իրազեկմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Հ. ՀՈՎԵՅԱՆ

2026թ. հուլիսի 21
ք. Մարտունի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հուլիսի 2026 թվականի №913-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱԿՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 6-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 38 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏԼՎՈՂ 05-045-0014-0011 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ
ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, 16.12.2021 թվականի ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ և 3.1 մասերի պահանջներով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» №912-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի №1023-Ն որոշումը, Մարտունի համայնքի ավագանու 2026 թվականի մայիսի 27-ի №94-Ա որոշումը, նկատի ունենալով, որ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև հիմք ընդունելով Դուխիկ Վալդի Մխիթարյանի 26.03.2026 թվականի №2378-S դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծակքար բնակավայրի 6-րդ փողոց, թիվ 38 հասցեում գտնվող, Դուխիկ Վալդի Մխիթարյանին (ծնված՝ 24.02.1956 թվականին), Ռոբերտ Միսակի Մխիթարյանին (ծնված՝ 25.06.1975 թվականին), Արմեն Միսակի Մխիթարյանին (ծնված՝ 20.08.1976

թվականին) և Բագրատ Միսակի Մխիթարյանին (ծնված՝ 19.11.1977 թվականին) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող 05-045-0014-0011 կադաստրային ծածկագրով 0.3854 հա մակերեսով փաստացի օգտագործվող բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված 73.82 քմ արտաքին մակերեսով կիսանկուղը (ներքին մակերեսը՝ 56.74 քմ, կառուցված՝ 2017 թվականին), 12.23 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը (ներքին մակերեսը՝ 8.11 քմ, կառուցված՝ 2017 թվականին), 1.95 քմ մակերեսով բնակելի տան բաց պատշգամբը կամ աստիճանահարթակը (կառուցված՝ 2017 թվականին), 155.82 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը (ներքին մակերեսը՝ 123.41 քմ, կառուցված՝ 2017 թվականին), 55.14 քմ արտաքին մակերեսով անասնաշենքը (ներքին մակերեսը՝ 41.73 քմ, կառուցված՝ 2017 թվականին), 1.62 քմ մակերեսով անասնաշենքի բաց պատշգամբը կամ աստիճանահարթակը (կառուցված՝ 2017 թվականին), 1.44 քմ արտաքին մակերեսով զուգարանը (ներքին մակերեսը՝ 0.64 քմ, կառուցված՝ 2015 թվականին) և 1.72 քմ մակերեսով պարիսպը (կառուցված՝ 2017 թվականին) ճանաչել օրինական:

2. Ինքնակամ կառույցների օրինականացման վճարը կազմում է՝

կիսանկուղի համար՝ $73.82 \times 10000 \times 0.1028 = 75887$ (յոթանասունհինգ հազար ութ հարյուր ութսունյոթ) ՀՀ դրամ.

բնակելի տան համար՝ $12.23 \times 10000 \times 0.1028 = 12572$ (տասներկու հազար հինգ հարյուր յոթանասուներկու) ՀՀ դրամ.

բնակելի տան բաց պատշգամբի կամ աստիճանահարթակի համար՝ $1.95 \times 10000 \times 0.1028 = 2005$ (երկու հազար հինգ) ՀՀ դրամ.

բնակելի տան համար՝ $155.82 \times 10000 \times 0.1028 = 160183$ (հարյուր վաթսուն հազար հարյուր ութսուներեք) ՀՀ դրամ.

անասնաշենքի համար՝ $55.14 \times 6000 \times 0.1028 = 34010$ (երեսունչորս հազար տասը) ՀՀ դրամ.

անասնաշենքի բաց պատշգամբի կամ աստիճանահարթակի համար՝ $1.62 \times 6000 \times 0.1028 = 999$ (ինը հարյուր իննսունինը) ՀՀ դրամ.

զուգարանի համար՝ $1.44 \times 6000 \times 0.1028 = 888$ (ութ հարյուր ութսունութ) ՀՀ դրամ.

պարիսպի համար՝ $1.72 \times 6000 \times 0.1028 = 1061$ (հազար վաթսունմեկ) ՀՀ դրամ.

ընդամենը՝ 287605 (երկու հարյուր ութսունյոթ հազար վեց հարյուր հինգ) ՀՀ դրամ:

3. Օրինականացման համար հիմք ընդունել լիցենզավորված չափագրողի կողմից ներկայացված հատակագիծը:
4. Առկա է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրն է՝ 20265MGTUM):
5. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
6. Անշարժ գույքերին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ծակքար բնակավայր, 6-րդ փողոց, թիվ 38 հասցեն:
7. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Հ. ՀՈՎԵՅԱՆ

2026թ. հուլիսի 22
ք. Մարտունի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հուլիսի 2026 թվականի N 914-Ա

**«ԲԻԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍ ԱՄՍՎԱ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 42 ՀԱՍՑԵԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿԻ Ա ԿՈՂՄՈՒՄ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 171-Ն որոշումը և «Բիթիել Սերվիսիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայտը (մուտք՝ 2026 թվականի հուլիսի 20-ի N 5893-S)՝ **որոշում եմ.**

1. «Բիթիել Սերվիսիս» ՍՊԸ-ին տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Մյասնիկյան փողոց, թիվ 42 հասցեին հարակից տարածքում գտնվող գովազդային վահանակի Ա կողմում 18 քմ մակերեսով սոցիալական արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն 2026 թվականի հուլիս ամսվա համար:
2. Սոցիալական գովազդի համար տեղական տուրք սահմանել 0 դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Հ. ՀՈՎԵՅԱՆ

2026թ. հուլիսի 22
ք. Մարտունի





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հուլիսի 2026 թվականի N 915-Ա

**«ՍԵՂԱ ՄԻՆԱՍՅԱՆ ԳԱՌՆԻԿԻ» ԱԶ-ԻՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ 3-ՐԴ 4-ՐԴ
ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՍՏՂԱՁՈՐ
ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 6-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 12 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՌԵՎՏՐԻ
ԿԵՏՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ
ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 171-Ն որոշումը և «Սեղա Մինասյան Գառնիկի» անհատ ձեռնարկատիրոջ հայտը (մուտք՝ 2026 թվականի հուլիսի 20-ի N-5880-S)՝ **որոշում եմ.**

1. «Սեղա Մինասյան Գառնիկի» ԱԶ-ին տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Աստղաձոր բնակավայրի 6-րդ փողոց, թիվ 12 հասցեում գործող 40 քմ մակերեսով առևտրի կետում ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն 2026 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակների համար (թույլտվությունը կցվում է):
2. «Սեղա Մինասյան Գառնիկի» անհատ ձեռնարկատիրոջը՝ Մարտունու համայնքապետարանի 900145113065 հաշվի համարին վճարել 22000 (քսաներկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ. ՀՈՎԵՅԱՆ



2026թ. հուլիսի 22
ք. Մարտունի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հուլիսի 2026 թվականի N 916-Ա

**«ՍՈՒՐԻԿ ՄԿՈՅԱՆ ԳԱՌՆԻԿԻ» ԱԶ-ԻՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ 3-ՐԴ ԵՎ 4-ՐԴ
ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՍՏՂԱԶՈՐ
ԲՆԱԿԱՎԱՅՐ, 35-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 15 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՌԵՎՏՐԻ
ԿԵՏՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 171-Ն որոշումը և «Սուրիկ Մկոյան Գառնիկի» անհատ ձեռնարկատիրոջ հայտը (մուտք՝ 2026 թվականի հուլիսի 20-ի N-5879-S)՝ **որոշում եմ.**

1. «Սուրիկ Մկոյան Գառնիկի» ԱԶ-ին տալ ՀՀ Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Աստղաձոր բնակավայր, 35-րդ փողոց, թիվ 15 հասցեում գործող 48 քմ մակերեսով առևտրի կետում ոգելից խմիչքների վաճառքի թույլտվություն 2026 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակների համար (թույլտվությունը կցվում է):
2. «Սուրիկ Մկոյան Գառնիկի» անհատ ձեռնարկատիրոջը՝ Մարտունու համայնքապետարանի 900145113065 հաշվի համարին վճարել 11000 (տասնմեկ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ. ՀՈՎԵՅԱՆ

2026թ. հուլիսի 22

ք. Մարտունի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հուլիսի 2026 թվականի №917-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 12-Ի №626-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով Սամվել Դալալի Պետրոսյանի 08.07.2026 թվականի №5526-Ք դիմումը՝ **որոշում եմ.**

- Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ղեկավարի 2026 թվականի մայիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վարդենիկ բնակավայրի Կ. Շահինյան փողոց, թիվ 82 հասցեում գտնվող 05-085-0114-0009 կադաստրային ծածկագրով հողամասում ինքնակամ կառուցված շինություններն օրինականացնելու մասին» №626-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
 - որոշման 1-ին կետի բոլոր «2006» թվերը փոխարինել «2013» թվերով.
 - որոշման 4-րդ կետի «2026ZFSP8W» ծածկագիրը փոխարինել «2026ELFVCT» ծածկագրով:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ. ՀՈՎԵՅԱՆ

2026թ. հուլիսի 22
ք. Մարտունի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հուլիսի 2026 թվականի N 918-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-066-0039-
0013 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՈՒՅՔԻՑ ԲԱԺԱՆՎՈՂ ԳՈՒՅՔԵՐԻՆ
ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետը և 33-րդ կետը՝ **որոշում եմ**.

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրում գտնվող 05-066-0039-0013 կադաստրային ծածկագրով գույքի բաժանումից առաջացող գույքերին տրամադրել հետևյալ հասցեները.

0,00668 հա մակերեսով գույքին՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ներքին Գետաշեն բնակավայր, Սուրբ Վարդան թաղամասի 2-րդ փողոց, թիվ 2/1 հողամաս հասցեն,

0,07829 հա մակերեսով գույքին՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ներքին Գետաշեն բնակավայր, Սուրբ Վարդան թաղամասի 2-րդ փողոց, թիվ 2 հողամաս հասցեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2026թ. հուլիսի 22

ք. Մարտունի



Հ. ՀՈՎԵՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հուլիսի 2026 թվականի N 919-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ, ՎԵՐԻՆ ԴԵՄԵՐ ԹԱՂԱՄԱՍԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 3/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-066-0039- 0007 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՈՒՅՔԻՑ ԲԱԺԱՆՎՈՂ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետը և 33-րդ կետը՝ **որոշում եմ**.

- Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայր, Վերին Դեմեր թաղամասի 1-ին փողոց, թիվ 3/1 հասցեում գտնվող 05-066-0039-0007 կադաստրային ծածկագրով գույքի բաժանումից առաջացող գույքերին տրամադրել հետևյալ հասցեները.
0,35458 հա մակերեսով գույքին՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ներքին Գետաշեն բնակավայր, Վերին Դեմեր թաղամասի 1-ին փողոց, թիվ 3/1 հողամաս հասցեն,
0,01336 հա մակերեսով գույքին՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ներքին Գետաշեն բնակավայր, Վերին Դեմեր թաղամասի 1-ին փողոց, թիվ 3/2 հողամաս հասցեն:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Հ. ՀՈՎԵՅԱՆ

2026թ. հուլիսի 23
ք. Մարտունի





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հուլիսի 2026 թվականի N 920-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-066-0028-0007 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՈՒՅՔԻՑ ԲԱԺԱՆՎՈՂ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետը և 33-րդ կետը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրում գտնվող 05-066-0028-0007 կադաստրային ծածկագրով գույքի բաժանումից առաջացող գույքերին տրամադրել հետևյալ հասցեները.

0,19010 հա մակերեսով գույքին՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ներքին Գետաշեն բնակավայր, Ներքին Դեմեր թաղամասի 8-րդ փողոց, թիվ 14 հողամաս հասցեն,

0,15344 հա մակերեսով գույքին՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ներքին Գետաշեն բնակավայր, Ներքին Դեմեր թաղամասի 8-րդ փողոց, թիվ 14/1 հողամաս հասցեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Հ. ՀՈՎԵՅԱՆ

2026թ. հուլիսի 23
ք. Մարտունի





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հուլիսի 2026 թվականի N 921-Ա

**«ՆՆ ՀՈԼԴԻՆԳ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍ ԱՄՍՎԱ ՀԱՄԱՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱԿՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 6-ՐԴ ՓՈՂՈՑ, 4-ՐԴ
ՓԱԿՈՒՂԻ, ԹԻՎ 3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ
ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 171-Ն որոշումը և «ՆՆ ՀՈԼԴԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայտը (մուտք՝ 2026 թվականի հուլիսի 22-ի N 5969-S)՝ **որոշում եմ**.

1. «ՆՆ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ին տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծակքար բնակավայրի 6-րդ փողոց, 4-րդ փակուղի, թիվ 3 հասցեում գործող առևտրի կետում 6 քմ մակերեսով արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն 2026 թվականի հուլիս ամսվա համար (թույլտվությունը կցվում է):
2. «ՆՆ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի տնօրենին՝ Մարտունու համայնքապետարանի 900145106069 հաշվի համարին վճարել 4500 (չորս հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ. ՀՈՎԵՅԱՆ

2026թ. հուլիսի 23
ք. Մարտունի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հուլիսի 2026 թվականի N 922-Ա

**«ՆՆ ՀՈԼԴԻՆԳ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍ ԱՄՍՎԱ ՀԱՄԱՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԱՆՈՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ
ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 5 ՀԱՍՅԵՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ
ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 171-Ն որոշումը և «ՆՆ ՀՈԼԴԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայտը (մուտք՝ 2026 թվականի հուլիսի 22-ի N 5970-S)՝ **որոշում եմ.**

1. «ՆՆ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ին տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Երանոս բնակավայրի Երևանյան խճուղի, թիվ 5 հասցեում գործող առևտրի կետում 16 քմ մակերեսով արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն 2026 թվականի հուլիս ամսվա համար (թույլտվությունը կցվում է):
2. «ՆՆ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի տնօրենին՝ Մարտունու համայնքապետարանի 900145102068 հաշվի համարին վճարել 12000 (տասներկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ. ՀՈՎԵՅԱՆ

2026թ. հուլիսի 23
ք. Մարտունի





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հուլիսի 2026 թվականի N 923-Ա

**ԹՈՐԳՈՄ ՀԱՍԱՆԻ ԽՈՒԴՈՅԱՆԻ ՀԵՏ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-
ԻՆ ԿՆՔՎԱԾ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԻՃՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՁԱԿԱՆ
ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԵՐՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 100,0 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ
ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասի և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Թորգոմ Հասանի Խուդոյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Թորգոմ Հասանի Խուդոյանի հետ 2023 թվականի հոկտեմբերի 25-ին կնքված Մարտունի համայնքի Լիճք բնակավայրի վարչական սահմանների ներսում գտնվող պետական սեփականություն հանդիսացող 100,0 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության արոտավայրի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգել մեկ տարով՝ մինչև 2027 թվականի հուլիսի 23-ը:
2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Հարություն Հարությունյանի վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Զ. ՀՈԿԵՅԱՆ

2026թ. հուլիսի 23
ք. Մարտունի





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հուլիսի 2026 թվականի N 924-Ա

**«ԾԻՐԱՆ ՄԱՐԿԵՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍ ԱՄՍՎԱ ՀԱՄԱՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ,
ԹԻՎ 30 ՀԱՍՅԵՌԻՄ ԳՏՆՎՈՂ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ
ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 171-Ն որոշումը և «ՆՆ ՀՈԼԴԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայտը (մուտք՝ 2026 թվականի հուլիսի 22-ի N 5968-S)՝ **որոշում եմ.**

1. «Ծիրան Մարկետ» ՍՊԸ-ին տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Երևանյան փողոց, թիվ 30 հասցեում գործող առևտրի կետում 6 քմ մակերեսով արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն 2026 թվականի հուլիս ամսվա համար (թույլտվությունը կցվում է):
2. «Ծիրան Մարկետ» ՍՊԸ-ի տնօրինությանը՝ Մարտունու համայնքապետարանի 900145101060 հաշվի համարին վճարել 4500 (չորս հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ. ՀՈՎԵՅԱՆ

2026թ. հուլիսի 23
ք. Մարտունի





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հուլիսի 2026 թվականի N 925-Ա

ԱՎԵՏԻՔ ԳՎԻԴՈՆԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1 հոդվածի 2-րդ մասի, 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 34-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի 2026 թվականի հուլիսի 23-ի գեկուցագիրը՝ համաձայն որի Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի բնակիչ Ավետիք Գվիդոնի Առաքելյանը (ծնված՝ 18.01.1952 թվականին) չի վճարել իր անվամբ սեփականության իրավունքով հաշվառված GAZ 69 մակնիշի 1968 թվականի արտադրության 16 LS 547 հաշվառման համարանիշի մարդատար ավտոմեքենայի և թվով չորս անշարժ գույքերի գույքահարկը, որի հաշվարկված և չվճարված հարկային պարտավորությունը 23.07.2026 թվականի դրությամբ կազմում են 184793 (մեկ հարյուր ութսունչորս հազար յոթ հարյուր իննսուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառք՝ 145817 (մեկ հարյուր քառասունհինգ հազար ութ հարյուր տասնյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ, տույժ՝ 39156 (երեսունինը հազար հարյուր հիսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ, ինչպես նաև հաշվի առնելով, որ Ավետիք Գվիդոնի Առաքելյանը չի կատարել հարկային պարտավորությունները՝ **որոշում եմ.**

1. Ավետիք Գվիդոնի Առաքելյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ վերոնշյալ փաստական հանգամանքները պարզելու նպատակով և լսումների օր նշանակել 2026 թվականի օգոստոսի 6-ին, ժամը 12:00-ին Մարտունու համայնքապետարանի վարչական շենքում (հասցեն՝ ք.Մարտունի, Շահումյան փողոց, թիվ 2):

2. Վարույթի իրականացումը հանձնարարել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի վարչական վարույթի իրականացման հարցերով հանձնաժողովին:
3. Սույն որոշման մասին ծանուցել Ավետիք Գվիդոնի Առաքելյանին (հասցեն՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնք, Մարտունու քաղաք Մյասնիկյան փողոց, թիվ 45/1):
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Հ. ՀՈՎԵՅԱՆ

2026թ. հուլիսի 23
ք. Մարտունի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հուլիսի 2026 թվականի N 926-Ա

ԱԼՎԱՐԴ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1 հոդվածի 2-րդ մասի, 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 34-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 219¹ հոդվածի, 158-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի կողմից 2026 թվականի հուլիսի 23-ին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 10 արձանագրությունը ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնք, Ներքին Գետաշեն բնակավայր, Վանքի թաղամաս, 5-րդ փողոց, թիվ 190 հասցեում գործող «Ալվարդ Բաղդասարյան» ԱԶ-ի խանութ սրահում առևտրի, սննդամթերքի վաճառքով զբաղվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների աշխատողներին աշխատանքային արտահագուստի կրումը չապահովելու մասին՝ **որոշում եմ**։

1. Հայաստանի Հանրապետության «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 158-րդ հոդվածի 9-րդ մասով արձանագրված վարչական իրավախախտման համար Ալվարդ Անուշավանի Բաղդասարյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ և լսումների օր նշանակել 2026 թվականի հուլիսի 28-ին, ժամը 11:20-ին Մարտունու համայնքապետարանի վարչական շենքում (հասցեն՝ ք.Մարտունու, Շահումյան փողոց, թիվ 2)։
2. Վարույթի իրականացումը հանձնարարել ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի վարչական վարույթի իրականացման հարցերով հանձնաժողովին։
3. Համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնին՝ սույն որոշման մասին ծանուցել Ալվարդ Անուշավանի Բաղդասարյանին։
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական իրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Հ. ՀՈՎԵՅԱՆ

2026թ. հուլիսի 23
ք. Մարտունու





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հուլիսի 2026 թվականի N 927-Ա

ԳԱՐԻԿ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՆԱՀԱՊԵՏՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1 հոդվածի 2-րդ մասի, 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 34-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 219¹ հոդվածի, 158-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի կողմից 2026 թվականի հուլիսի 23-ին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 11 արձանագրությունը ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնք, Ներքին Գետաշեն բնակավայր, Գետափնյա թաղամաս, 1-ին փողոց, 1-ին նրբանցք, թիվ 7 հասցեում գործող «Գարիկ Նահապետյան» ԱԶ-ի խանութ սրահում առևտրի, սննդամթերքի վաճառքով զբաղվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների աշխատողներին աշխատանքային արտահագուստի կրումը չապահովելու մասին՝ **որոշում եմ**.

- Հայաստանի Հանրապետության «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 158-րդ հոդվածի 9-րդ մասով արձանագրված վարչական իրավախախտման համար Գարիկ Վլադիմիրի Նահապետյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ և լսումների օր նշանակել 2026 թվականի հուլիսի 28-ին, ժամը 11:30-ին Մարտունու համայնքապետարանի վարչական շենքում (հասցեն՝ ք.Մարտունի, Շահումյան փողոց, թիվ 2):
- Վարույթի իրականացումը հանձնարարել ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի վարչական վարույթի իրականացման հարցերով հանձնաժողովին:
- Համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնին՝ սույն որոշման մասին ծանուցել Գարիկ Վլադիմիրի Նահապետյանին:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ. ՀՈՎԵՅԱՆ

2026թ. հուլիսի 23
ք. Մարտունի





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 հուլիսի 2026 թվականի N 928-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ
ՀԱՄԱՅՆՔ, ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔ, ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 65
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-003-0519-0094 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՈՒՅՔԻՑ ԲԱԺԱՆՎՈՂ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետը և 33-րդ կետը՝ **որոշում եմ**.

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնք, քաղաք Մարտունի, Երևանյան փողոց, թիվ 65 հասցեում գտնվող 05-003-0519-0094 կադաստրային ծածկագրով գույքի բաժանումից առաջացող գույքերին տրամադրել հետևյալ հասցեները.
90.60 քմ մակերեսով շինությանը՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, քաղաք Մարտունի, Երևանյան փողոց, թիվ 65/5 հյուրանոց հասցեն,
133.74 քմ մակերեսով շինությանը՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, քաղաք Մարտունի, Երևանյան փողոց, թիվ 65/4 հյուրանոց հասցեն,
139.33 քմ մակերեսով շինությանը՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, քաղաք Մարտունի, Երևանյան փողոց, թիվ 65/3 հյուրանոց հասցեն,
129.30 քմ մակերեսով շինությանը՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, քաղաք Մարտունի, Երևանյան փողոց, թիվ 65/2 հյուրանոց հասցեն,

118.47 քմ մակերեսով շինությանը՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, քաղաք Մարտունի, Երևանյան փողոց, թիվ 65/1 հյուրանոց հասցեն,

407.23 քմ մակերեսով շինությանը՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, քաղաք Մարտունի, Երևանյան փողոց, թիվ 65 հյուրանոց հասցեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Հ. ՀՈՎԵՅԱՆ

2026թ. հուլիսի 24
ք. Մարտունի

